

Բ Ա Ջ Մ Ա Վ Է Պ

Բ Ա Յ Ա Ռ Ի Կ Թ Ի Ի

Ն Ո Ւ Ի Բ Ո Ւ Ա Մ

Հ. ՂԵԻՇԱՆԻ Մ. ԱԼԻՇԱՆԻ

ՄԱՀՈՒԱՆ 60ԱՄԵԱԿԻՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ Հ. ՎԱՀԱՆ	- Առանց շրջանակի	229
ԱՐՄԵՆ ԵՐԿԱԹ	- Ալիշանի նիւթը	241
ԱՐՄԱՃԵԱՆ ՄԱՌԻ	- Հայր Ղեւոնդ Ալիշան	242
Ս. ՊԻՈՍ Ժ. ՊԱՊԷՆ	- Յաւակցական նամակ՝ Հ. Ալիշանի մահուան առթիւ .	244-5
ՍՐԱՊԵԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ	- Ալիշանի բանաստեղծ	246
ԽԱՆՊԷԿԵԱՆ ՄԱՆՈՒԿ	- Ալիշան՝ մեծ հայրենասէրը	249
Գ. Ս.	- Նահապետին վիշտը (Ալիշանի բանաստեղծական ապրումներուն հետ)	253
ՏԵՐ ՂԱԶԱՐԵԱՆ Յ.	- Ալիշանի «Սիսուան»ը	260
ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ Հ. ՄԻՔԱՅԷԼ	- Ալիշանի «Այրաքատ»ը	262
ՔԻԻՐՏԵԱՆ Յ.	- Բուսաբանական հին գրչագրի մը հատուկ տրոհներ (Հ. Ալիշանի յիշատակին)	265
ԶՐԱՔԵԱՆ Հ. ՔԵՐՈՐԷ	- Յուշերս Հ. Ալիշանի մասին	268
Հ. Ն.	- Հանդէսներ Հ. Ալիշանի մահուան 60ամեակին առթիւ .	271
ԱԼԻՇԱՆ	- Հայ հայրենիք (Խալիբէն քրդմն. Ի. Քիւչիւքան) .	275
ՏԵՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ Հ. ՆԵՐՍԷՍ	- Գրիս. Ալիշանի «Նուագներ»ուն, տպ. Երեւան, 1957	277
ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ Հ. ՎԱՀԱՆ	- Ինչպէս տեսայ Հայաստանը (Շար.)	280



1843 ~ 1961
ՀԺԹ. Տ Ա Ր Ի

ԹԻԻ 11 - 12

ՆՈՅԵՄԲԵՐ - ԴԵԿՏԵՄԵՐ

Բ Ա Ջ Մ Ա Վ Է Պ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ ~ ԳՐԱԿԱՆ ~ ԳԻՏԱԿԱՆ ~ ԲԱՐՈՅԱԿԱՆ

Revue P A Z M A V E B

CXIX^o année, 1961, N. 11 - 12 Novembre - Décembre

ԱՌԱՆՅ ՇՐՋԱՆԱԿԻ

Հ. ԱԼԻՇԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ 60ԱՄԵԱԿԻՆ

Կապույտ լճակի ափին՝ փոքրիկ կղզի մը խոշոր նուռուֆարի պէս կը ծփայ. խաղաղ շրջապատ մ'ունի, հազիւ ձկնորսական նաւակներ կ'անցնին օրօրելու համար նոճիներու թանձր շուքերը եւ ափերուն տալու ալիքոտ հարուածներ: Մենութիւն մեծութեան մէջ... հազիւ քանի մը համեստ պատուհաններ կը հաղորդուին հորիզոնին հետ, եւ գիշերը կը վառեն հանդիստ լապտերներ՝ պատառ մը լոյս տալու սպիտակ թուղթերուն, որոնք դիպուած են դրասեղանին վրայ: Երկու պատուհաններ մինչեւ կէս գիշեր չեն քնանար. սիրտ մը այնտեղ կը բարախէ, սուրալով իր շրջապատին դուրս, առանց հորիզոնի, առանց սահման զնոյ անջրպետի գէպի երազային աշխարհի մը աւելի երազային դարերը, որուն համար կ'ապրի եւ կը շնչէ:

Ո՞վ է այդ ճգնաւորը, յեղափոխականը, հայրենասէրը, պատերազմիկը, որ առանց սուրբ՝ բանակներ կը շարժէ, առանց երեւալու՝ ներկայ է գէպի ապագան արշաւող ժողովուրդի մը սրտին մէջ:

Ի՞նչ հոգեկան ոյժ է դա եւ հզօր երե-

ւակայութիւն՝ որ կը շրջի լոկ մտքով Կիլիկիայէն մինչեւ Կասպից ծով, Պոնտոսէն մինչեւ Միջագետքի տափաստանները, աւերակներ փնտռելու, կամարներ գրկելու, եկեղեցիներ համբուրելու եւ դռներու մեռած դարերուն. «Բարձրացէ՛ք դէպի արեգակը, փառքի կոթողներ, բացէ՛ք ձեր դռները նոր կեանքի մը համար»:

Հ. Ղեւոնդ Մարգար Ալիշան մարգարէ մը չէր, ոչ ալ գերբնական էակ մը. պարզ կրօնաւոր մը, անպաճոյճ հանդերձներով պատասպարուած, սեւ կապայ մը վրան, կաշիէ դօտի մը մէջքին եւ թասի նման դտակ մը գլխուն, նիհար եւ ոսկրուտ, ջղային եւ զսպուած կամքով, մարմին առած ստուեր մը, որ եթէ քովէդ անցնէր՝ պիտի չզղայիր անոր քայլերը, եթէ խօսէր՝ պիտի լսէիր անդեմական ձայն մը, եթէ նայէր՝ պիտի ըսէիր թէ Արարատի վրայ կախուած կանթեղն է:

Ոչ ոտք դրաւ հայրենի հողին վրայ, ոչ անոր արեւները տեսաւ, ոչ ծաղիկներու բոյրն զգաց, ոչ Արարատին նայեցաւ. Դուինի աւերակներէն: Ծնած Վոսփորի կայսերական ափերուն վրայ, հա-

սակ առած վեներական կապոյտին տակ, երկու գեղեցկութիւններու համադրութիւնը ծնաւ իր սրտին մէջ բանաստեղծութեան մուսան, եւ Ս. Ղազարը բացաւ իր առջեւ դժբախտ երկրի մը մոռցուած դանձերը:

Նա պատանի հասակէն ըսաւ իր սրտին.

— Հոն կ'ուզեմ որ զիս տանիս, հոն ուր Հայկ բռնութեան դէմ պայքարեցաւ, ուր Մեսրոպ երկնքէն մեր լեզուն բերաւ, եւ Վարդան հաւատքի արիւնով ներկեց այդ աշխարհը: Հոն կ'ուզեմ որ զիս տանիս, միայն հոն: Եւ այս սէրն իր մէջ մեծցաւ, ընդարձակուեցաւ, տարածուեցաւ անընթեռնի ձեռքերէն մինչեւ մոռցուած յուշարձաններ, անցաւ մութ դարերէն՝ հաւաքելու անհետացած անուններ ու դէմքեր, հերոսները դրաւ իրենց պատուանդաններուն վրայ, սուրբերու լուսապսակ կերտեց, հայրապետներուն ձեռքն ոսկի գաւազան տուաւ եւ զինուորականին ու խոնարհ ժողովուրդին հետ մտաւ պայքարի՝ բազում բռնաւորներու դէմ, մեր յաւիտենական դոյութեան համար:

Հանձարներ կան՝ որ ամբողջ ժողովուրդ մը կ'արժեն, որոնց համայն մարդկութիւնը կը վստահի ազնուական առաքելութիւն մը, ոչ երկաթէ բազուկի ոյժով, այլ փափուկ ձեռքով, մտքի ճառագայթներու տակ, կենսագործել արիւնի պատանքներով թաղուած պատմութիւն մը:

Եւ այդ գիտութեան ճշմարտութիւնը երիտասարդ հասակէն նստած անպաճոյճ գրասեղանի մը առջեւ, միս մինակը, իր շուրջըն ստեղծելով առանց շրջանակի աշխարհ մը, անծանօթ ժամանակներէն մինչեւ իր գերեզմանի ամրանքը, բառ առ բառ, տող առ տող աւիտեց դարերը, չմնաց ձեռագիր մը Ս. Ղազարի մէջ, չմնաց տպագրութիւն մը՝ մատենադարանի մութ անկիւնները, որոնց իր մատները չհպէին: Երբեք իր գլուխը չբարձրացուց հետաքրքիր ակնարկ մը նետելու լուսամուտէն անդին խայտառիկ բնութեան. ո՛չ կոնտրափառի մը թովիչ ձայնը սրտին դռները

բախեց. մարմինով՝ այդ ազդատիկ սենեակին մէջ, հոգիով՝ հեռացած Կիլիկիայէն Կապուից ծով, Պոնտոսէն Միջագետքի տափաստանները, կը հետեւէր այն սրտին որ կ'ըսէր. Հոն կ'ուզեմ որ զիս տանիս, հոն: Յանկարծ ընդոստ վեր կը բարձրացնէր իր գլուխը՝ երբ Ս. Ղազարի զանգակները կը հնչէին եւ գանգիւնները կ'սկսէին իր դուռը բախելու. ժամերգութեան պահն էր. հայրենի կոչնակներուն մշտանորոգ ձայնը, հին շարականներու, հին աղօթքի սրտազրաւ երգը, չեմ գիտեր ինչ հաւատքով եւ երազներով, հոն, այդ կարմիր որմերով, կանաչներու մէջ կամար կապած նուազփայլէ կղզեակին մէջ փոխադրուած, որ Անիի դժբախտ կաթողիկէն կրկին երկնք բարձրանար, Հոգիսիմէն «Անձինք»ը լսէր, Աղթամարի սուրբ խաչը մինակ չմնար եւ մեր անհամար աւերակները անգամ մ'ալ ապրէին: Անշուշտ Ծարականի ճամբաներով իր հոգին կը թափառէր դարձեալ հայրենի աշխարհը, Լուսաւորչին հետ խօսելու, Սահակ-Մեսրոպի ձեռքերն համբուրելու, Նարեկէն հառաչանք մը քաղելու եւ Ծնորհալիէն փոխ առնելու — Առաւօտ լուսոյ, Արեգակն արդար, Առ իս լոյս ծագեալ:

Բայց նա կրկին իր աշխատանքին մէջն էր. դեռ արեւը չէր ծագած, աստղերը կը զանդաղէին հեռանալու, ճրագ մը կը պլպլար երկու պատուհաններուն ետեւ եւ ինքը կը փնտռէր իր սրտին հետ միասին Յուշիկ հայրենեաց Հայոց. հայրենի յիշատակներ, այնքան սրտազրաւ եւ այնքան դարերով մոռցուած, դէմքեր՝ որոնք փայլած էին մեր աստղակամարին վրայ, եւ ամպեր՝ սեւ վարագոյրի պէս ծածկած էին զանոնք: Հէքեաթներ չէին՝ որ ծերունիի մը պէս իր թոռներուն պատմէր, այլ անմահութեան սահմանուած դէմքեր, ուր պէտք էր լուսաբանել պատմութեան ժլատ ակնարկները, զարգարել լուսապսակով, անոնց վրան ձգել բանաստեղծութեան ծիրանին, որ Թէոդոր Սալիուին իր երիտասարդ արիւնով ներկէր Սեղեմնու-

տի աղբերակները, Կարմիրն Վարդան հաւատքի արեւն ողջունէր, Վահան Գողթնացին իր տարազիր սիրտն Հայաստան տանէր, Խուլ Խաչիկը ածափաններու դէմ պայքարէր եւ Շուշան Վարդենիին շղթաներն համբուրէին Հայաստան եւ Վրաստան՝ Ո՞վ այնքան յուզումով պիտի հետեւէր տարաբախտ Լեւոն վերջինի պանդուխտ քայլերուն, ո՞վ պիտի պսակէր Զապէլ քաղուին՝ բարեգործութիւններու զանգիւններով եւ Հայկ համաստեղութիւնը պիտի սփռէր մեր երկնքին վրայ: Արիւն ինքն էր այդ ամէնուն մէջ, իր ճշմարտի, հաւատարմի, պայքարողի եւ յեղափոխականի աննուաճ հոգիով: Ամէն անուն իր սրտէն խոչոր մաս մ'առաւ եւ ինքն ամէնուն տուաւ մեր հայրենի ծագիկներուն բուրումը եւ գոյնը, մեր արեւուն տաքութիւնը եւ մեր ձիւնեղէն լեռներուն սպիտակ գեղեցկութիւնը:

Ի՞նչպէս մեզի չաւանդէր իր սրտին թաղուն զգացումները, երբ Վերջաբան առ Հայկակ արձակ բանաստեղծութեան հզօր տողերը զրեց. Ծառ սեղաններ, շատ տապաններ, շատ քարեր ու հողեր կան ի Հայաստան, ուսկից դարէ դար անդադար կու ծնի հոտն անուշուրեան, հոտն հայրենեաց, գոր չեն կրնար ջնջել ոչ գէնք, ոչ քէնք:

Բայց նա աւելի խոչոր աստղ մը կը փնտռէր. ու դուռ Կիլիկիոյ երկնակամարին. Շնորհալի եւ պարագայ իւր: Մտաւ Հոռմկլայի գղեհկը, բանաստեղծ բանաստեղծի քով, մէկ Ծնորհալին միւս Ծնորհալին սրտակից, ուղեց այդ մեծ քերթողին շրթներէն լսել Յիսուս Որդիի հոգեպարար քնարին ձայնը, Զարքիֆներէն մաս մը փրցնել եւ Սէր անուն Յիսուսը լացով անգամ մը գէթ միասին երգել:

Իր սիրտը չուզեց չուտով հեռանալ մեր Կիլիկիայէն, անցաւ գլեհակ գղեհակ, բերդէ բերդ, վանքէ վանք: Սիրտը թռաւ Լամբրոնի գղեհակը. հոն էր Ներսէսը, Տարսնի նոր Պօղոսը, գրիչը ձեռքին, աչքերն երկնք, Մայր հաւատքն կը գրէր, պատարագի անթափանց խորհուրդներուն

մէջ կը թափառէր եւ հրեղէն ճառերով իր սիրտը բոց առած էր: Անոր լուսեղէն մատներով զրուած ձեռագիրը հազար անգամ համբուրած էր Ս. Ղազարի մէջ, եւ կ'ուզէր որ իր Սիսուանը Սկեռացիին ոսկիով, Ռոսլինի գոյներով, Պիծակի ծագիկներով անոր պատկերը դէպք, որ սրտի վրասեղանին վրայ դնէր, եւ դիտէր որ ու զիչեր այդ մեծ հոգիին տեսիլքները:

Ի՞նչպէս առանց Լեւոն մեծագործին հետ խօսելու իր տեղադրութեան էջերը փակէր. պէտք էր անոր հետ Տաւրոսի լեռներէն մինչեւ ծովերն իջնել եւ այնտեղ տնկել յաղթական սուրբ: Պէտք էր Սիսի դռները բանալ եւ ծափահարել յաղթական բանակներու վերադարձը, համբուրել բերդերու դռներուն վրայ խաչերը, կարգալ արձանադրութիւնները եւ տարաբախտ Կիլիկիոյ երկնքին վրայ դրել. Այստեղ հաւատք եւ քաջութիւն չեն մեռնիր:

Կար սակայն պատմական եւ դարաւոր յիշատակներով աւելի հարուստ երկիր մը, Մայր Հայաստանը, ուր երազեց նահանգէ նահանգ թափառիլ. երթամ տեսնեմ իմ աշխարհիս վիճակը (Վահան Գողթնացի) ըսաւ իր սրտին եւ իր անպաճոյճ գրասեղանին առջեւ նստած, բացաւ Հայաստանի քարտէզը. յանկարծ Շիրակը դարձաւ իր աչքերուն, տեսաւ Անին, Ախուրեանի գրկին մէջ, որ ալիքներու երգերով զայն կ'օրօրէր մօր նման. զմայլած գոչեց. Հոն կը փափաքիմ քրոջիլ, հոն, եւ հանգչիլ սիրելի հայրենակիցներու հետ: Ո՞ր դռնէն ներս մտնէր՝ չէր գիտեր. ո՛ւր դնէր քայլերը՝ սիրտ մը հոգին տակէն ցաւ պիտի զգար, սրբութիւն մը պիտի կոխէր, հազար ու մէկ եկեղեցիներ, արքունի պալատներ, մարդամբոխ փողոցներ զինքը պիտի առեւանդէին, չօչափող ձեռքերը պիտի մաշէին, համբուրող շրթները պիտի այրէին: Հրաշք պիտի ըլլար՝ եթէ սիրտն հոն չըթողնէր. մահացու մեղք պիտի ըլլար՝ եթէ անծանօթ անուն մ'ալ չգրէր իր տեղադրութեան մէջ. Թերեւս չինարար հո-

գլխի մը յարուժիւն առնէր, թերեւս սիրտ մը կրկին տրոփէր՝ ինչպէս մամուռ քարին յանձնեց իր յոյսերը: Աշտոներ կային այնտեղ, մէկն երկաթէ խաչը ձեռքին, միւսն ողորմութեամբ լի ձեռքերը պարզած: Կային Սմբատներ աշտարակներու եւ պարիսպներու վրայ՝ յաւիտենական դէտ կանգնած յաւերժական Անիին: Գաղիկներու ծիրանին դեռ կը տեսնուէին երկինքին վրայ, եւ Կատրամիտէն ոսկեղէն թախտ մը կ'ուզէ Շիրակի մէջ բանաստեղծական մարգրիտներով ընդելուզուած: Ալիշան իր սիրտը բաժնեց ամէնուն եւ երազներով յափշտակուած գրեց:

Շատ մեզ լալօմֆն, Ախուրեան.

Դիֆ ձեռն ի լանջ հայկաշունչ.

Ահա գմբէթֆ վերյաքեան,

Ահա շուշանըն կանգնի,

Ողջոյն տալ քեզ, Նոր Անի:

Այրարատն ալ զինքն հրապուրեց իր ամենափարթամ դաշտերով, եւ սրբազան լեռը թուեցաւ երկինք հասնող տաճար մը, որուն ոտքերուն տակ պէտք էր ծնրադրել եւ աղօթել: Դրախտէն մնացած ծաղիկներ կային, Նոյի տնկած որթատունկը եւ Շուշի սիրած խնձորը կար: Տարիներ եթէ չըլէր՝ պիտի չկարենար համբել Հայաստանի սրտին բարախումները, պիտի չկարենար թել առ թել հանդուցել պատմութիւնը պատմութեան, քաղաք քաղաքի եւ վահան վահանի: Բայց նա հարցուց պատմադիրներուն. Ղազար Փարպեցին բացաւ Արարատեան դաշտին մէջ գիւղ առ գիւղ, արտ առ արտ չընելու: Խորենացիին հետ մտաւ Արտաշատը, մեծ հիմնադրին երազներն հողէն դուրս հանելու: Ափ մը հող Արմաւիրէն՝ սրտին զննելու: Էջմիածին, Հռիփսիմէ Շողակաթ եւ Գայիանէ իր աչքերուն մէջ Լուսաւորչի կանթեղներ թուեցան. համարոյր մը մէկուն որմերուն, շարական մը միւսին կամարներուն տակ, աղօթք մը երրորդին խորանին առջեւ արտասանելու եւ էջ Միածինն ի Հօրէ եւ լոյս փառաց ընդ նմա կրկին լսելու Լուսաւորչի շրթ-

ներէն, որպէսզի այդ մենարանին մէջ՝ Հայաստան իր հաւատքով եւ երկնաման կոթողներով իր տարազէր սրտին հետ ամէն օր խօսէին:

Ո՛րքան արքայական ապարանքներ եւ ռազեց, ո՛րքան մարտական փողեր կարծեց լսել եւ ո՛րքան մտերիմ խօսեցան՝ իրեն հետ Արաքսն ու Ախուրեանը, Հրազդանն ու Քասախը: Ո՛րքան պիտի փափաքէր փոխանակ իր պատուհաններուն տակ խայտացող աղի ալիքներուն՝ Արաքսի քաղցրահամ ջուրն ըլլար եւ ինքը բերանը դնէր ու խմէր եւ չյագենար:

Չեմ կրնար երեւակայել այն ջերմ ըզգացումները որ զինքը տարուբեր ըրին Արարատեան դաշտին մէկ ծայրէն միւսը, այն արցունքը որ թափեց սրբազան կերոնի պէս Օշականի շիրիմին վրայ: Որքան դժուար բաժնուեցաւ իր սիրտը այդ ամէնէն նուիրական նահանգէն. եւ վրաստահ եմ, երբ վերջակէտը դրաւ, իր սիրտը դարձեալ ըսաւ՝ Հոն կ'ուզեմ որ զիս տանիք, հոն:

Արդեօք ի՞նչ պիտի գրէր Տարօնի վրայ, ի՞նչ սարսուռով պիտի մտնէր Ողական բերդը, ո՛ր պիտի փնտռէր Հացեկաց կամ Խորնի գիւղերը, ո՛ր արեւէն պիտի խնդրէր որ Վաչէի, Վասակի, Մուշեղի եւ Վարդանի բանակները կրկին լուսաւորէր՝ յաղթական սուրբերը դէպի կապոյտը ցըցած: Անշուշտ Առաքելոց վանքին առջեւ ծունր պիտի դնէր եւ Աշտիշատի սուրբ Կարապետին ուխտի պիտի երթար՝ մատաղ ընելու. բայց Տարօնը բախտաւոր չեղաւ եւ ոչ Վանայ ծովը լսեց Նեմրութի զազաթէն Չայն տուր ով ծովակ սրտառուչ կանչը:

Մինչդեռ Սիսակաւնը խեց անոր գրիչը ձեռքէն, տարաւ իր լեռները, իր նեղ հովիտները. ցոյց տուաւ իր անմատչելի բերդերը, նրբաքանդակ խաչերով անհամար շիրիմները: Անոր երեւցան Ստեփանոս Սիւնեցին, բանաստեղծ Առաքելը. մէկը մեղր դրաւ իր առջեւ, միւսը քնար մը նուիրեց որ երգէր, ինչպէս ինքը կը զգար, Բաբելի եւ Դաւիթ բեկի հերոսու-

թիւները, եւ ողբար Վասակ մատնիչի մը վրայ:

Ստեփանոս Օրպելեան մը պէտք էր որ զինքն առաջնորդէր այդ քիչ մ'անծանօթ հայկական լեռնաշխարհը, բոլորովին կղզիացած միւս նահանգներէն, քիչ մ'ինքնավար, խիզախ եւ ինքնավստահ բնակիչներով:

✕ Ալիշան բացաւ իր սենեակի պատուհանը. դուրսը դարուն էր. բարկ արեւ մը լեցուցած էր կղզիին պուրակները, թռչունները կը ճռուողէին թուփէ թուփ, գեղձենին ու ծիրանը ծաղկեր էին չըքնաղ աչքերով: Ափերուն մէջ Օրպելեանի գիրքը՝ շրջան ըրաւ Նոճիներու ճամբուն վրայ, ճերմակ մազերն ու մօրուքը իր ակնոցները կը շրջանակէին. բայց նա առանց սահմանի՝ երազով կը շրջէր Սիւնիքի նեղ հովիտներուն մէջ, բերդեր եւ գիւղեր, վանքեր ու պատմական դէմքեր իր աչքերուն առջեւէն կու գային ու կ'անցնէին:

Ապա կը դառնար իր սենեակը. դէզերով նամակներ հասած էին Հայաստանի ամէն կողմերէն, Սիւնիքի հեռաւոր ու ձորերու մէջ մոռցուած գիւղերէն, որոնք արձանագրութիւն մը, քարի մը յիշատակարանը, վանքի մը փլատակ որմերու նըկարագրութիւնը կը բերէին,

Ծառայ եմ հայր սուրբ, անխնայ ձեռքերդ համբուրեմ, խոնարհ ստորագրութեամբ:

Ո՞վ գիտէ քանիններուն գրած էր սիրտն այրող կարօտը եւ քանիններ պատասխանած էին,

Կարօտդ իմս ըլլայ, Հայր սուրբ:

Երբ այսօր իսկ բանանք այդ Սիսականի հսկայ հատորը, մարդ դարմանքով պիտի տեսնէ, հազարաւոր անուններ, հազարաւոր արձանագրութիւններ, քարերը պատմութեամբ լուսաբանած, պատմութիւնը յուշարձաններով ճշտած: Յաճախ նոյն իսկ տեղացիներու յիշողութիւններէն ազատած հեռացած, հողին մէջ թաղուած:

Ինձ պատմեց Երեւանի մէջ գիտնական Յակոբ Անասեանը՝ թէ իր մէկ ճամբոր-

դութեան ընթացքին, Չանգեղուրի կողմերը կը հանդիպէ իննըսուն տարեկան ծերունիի մը: Ծերունին երբ կը լսէ թէ իր գիւմացինը Վենետիկ սորված է, աչքերը փայլ կ'առնեն, շատ հին յիշատակ մը կ'արթնայ մտքին մէջ եւ կ'ըսէ.

— Ընկե՛ր, ասկից շատ տարիներ առաջ, դեռ վառ երիտասարդ, ես դնացի Սուրբ Ղազար, մեծ Նահապետին աջն ու ոտքերն համբուրելու. նա ծոցաւ եւ իմ կօշիկներս համբուրեց, ասոնց վրայ հայրենի հող կայ՝ ըսելով: Յետոյ ինձ հարցուց թէ Որոտան գետին վրայ, Տաթեւէն վեր, հին կամուրջ մը կայ, տեսե՞ր ես:

— Հայր սուրբ, քեզի մատաղ, այդպէս կամուրջ չկայ մեր գետին վրայ. ես սարերը չափեր եմ, հովիտներն իջեր ելեր եմ եւ կամուրջ չեմ տեսած: Նա ինձ պատասխանեց. Կայ դաւակ, կայ, լաւ չես պտրտած քու ծննդավայրդ. երբ վերադառնաս Չանգեղուր՝ բարձրացիր գետէն վեր, եւ պիտի գտնես այդ հին կամուրջը: Վերադարձայ գիւղ, հարցուցի որտեղներու եւ հովիտներու, ոչ ոք ծանօթ էր այդ կամուրջին: Ի՞նչ ըսեմ, ախպէր. կացինը մէջքիս դրի եւ քանի մը ընկերներով բարձրացանք գետն ի վեր. ուր թուփ կար՝ կտրեցինք, ուր ժայռ կար՝ մաղցելով ելանք. գետն երթալով կը նեղնար, պատատուկ բոյսեր ափունք ափունքի կապած էին: Կանաչ մթութիւն մը կար այդ խոր հովիտին մէջ: Ահա պատատուկներու խիտ հանգոյց մը, երկու անիւրէն իրարու մէջ հիւսուած հաստ մալուխի պէս, ծածկած էին Որոտանը. տակէն ջուրը կը հոսէր ու կարելի էր, ըսեմ, քալելով անցնիլ մէկ ամիս միւսը, քնքան խիտ ու հաստատուն էին այդ պատատուկները: Կացինը գրինք եւ ջիղ առ ջիղ բաժնեցինք բոյսերը, տակից ելաւ մի հին կամուրջ, սրբատաշ քարերով շինուած. մի արձանագրութիւն կար վրան, մենք չկարողացանք կարդալ: Բա, ասեցի, էս ի՞նչ բան է, նա Վենետիկում կեցած, մեզից լաւ գիտէր մեր աշխարհի բաները:

Մէկ հատիկ չէ այդ ծերունին որ եկած է Ալիշանին ոտքն համբուրած է, եւ կորսւած կամուրջի մը անունով չափած է անոր հմտութիւնը: Նոյն բանը կ'ըսէին ինծի Հայաստանի գիտնականները՝ թէ Որ յուշարձանին մօտեմանք, Ալիշան գայն կարծես տեսած, համբուրած ու հրատարակած է արձանագրութիւնը:

Նա արդէն վաղուց չինած էր Տեղագիր Հայոց մեծաց գործը, ընդարձակ եւ խոր հմտութեամբ աշխարհագրութիւն մը, ոչ միայն աշխարհագիր-պատմիչներէն քաղած, այլ եւ անցնելով մեր սահմանները, Յոյն, Եգիպտացի, Հռոմէացի, Բիւզանդացի կամ Արաբ ճամբորդ աշխարհագէտներ իրենց լուսման դրած են այդ Տեղագիրն մէջ. բայց պէտք էր Հայաստանը ներկայացնել չքեղ թաղուհի մը պէս, իր դահն Արարատին վրայ, իր թաղը՝ մեր մայրսեան արեգակը, իր պալատը՝ մեր անամպ երկինքը:

Ինչ կ'ըլլար թէ Աստուած քանի մը տալիներ ալ աւելցնէր իր կեանքին վրայ եւ լճակին վրայ բացուող պատուհանները չփակէր, գէթ 15 նահանգներու հատորներ ոսկի անուններով մեր գիրկն առնէինք, բանայինք, նայէինք Կապուտան լեռներու վրայ, Գրիգոր Նարեկացիին սուրբ ձեռքերն համբուրէինք, Յովհաննէս Սարկաւաղին գերեզմանը փնտռէինք Հաղբատի մէջ:

Անշուշտ ինքն ալ հառաչեց, երբ 1901 Նոյեմբեր 22ին վերջին անգամ կ'ողջունէր Արարատէն ճամբայ ինկած արեւը. իր հսկայ գործը կէս կը մնար: ✕

Բայց անոր դրասեղանին վրայ կան տակաւին բազմաթիւ այլ հատորներ, գրեթէ բոլորը հայրենիքի մէկ էջերը լուսաբանելու, հաւատքին ու հոգիին մէկ դուռը բանալու: Հին հաւատք Հայոցը պիտի նկարագրէր Վարդավառի եւ Նաւասարդի տօները, Անահիտի մայրենի դէմքը պիտի դէք, Վահագնի հրեղէն ճամբան պիտի բանար երկինքի վրայ, ոսկեղէն յարդը բազումներուն մէջ. Աստ-

ղիկի ամպոտ մաղերուն վարդի ջուր պիտի սրսկէր:

Պիտի դար Ս. Լուսաւորիչը Արշալոյս քրիստոնէութեան Հայոց ծիածանի պէս սփռելու մեր երկնքին վրայ, որպէս խաչի դրօշակ՝ որ Մամիկոնեաններ, Բագրատունիներ բարձր բռնեն խաժամուխ ամբոխներու դէմ:

Ինչպէս ճարտար նկարիչ մը տերեւ մ'իսկ նկարելով գեղարուեստ կը ստեղծէ, այսպէս այդ մտքի մեծ վարպետը հայրենի դարուն մը չթողուց՝ առանց իր սրտին ծաղիկներուն, չմնաց աւերակ մը՝ առանց աչքերու ճառագայթին, ոչ լճուած դմբէթ մը՝ առանց երեսը խաչակնքելու:

✕ Գեո որքան խոհեր կային իր դմբէթեայ հոգեկան տաճարին մէջ, որքան հայ աստղեր, նոյնիսկ օտար երկինքներու վրայ, որոնց տրոտւմ փայլն հասաւ իր աչքերուն: ✕

Հայ-Վեցնետ մը դրեց փարթամ գաղութի մը երազներն ու կարօտները տանելու եւ յանձնելու Ջուղայի կամ Սպահանի մէջ անձկութեամբ սպասող շիրմներու: Հայ ստուերը տեսաւ վենետիկան ջուրերու մէջ, անուններ փնտռեց փողոցներու կամ ջրանցքներու վրայ, որ եթէ պանդուխտներ օր մը մոռնան Հայաստանը՝ Հայաստան գրեց չմոռնայ:

Նոյն փարիզ, Լոնտրա, Ամստերդամ, ուր՝ ո՞վ գիտէ՝ ո՞ր ձեռքն ալիքներուն յանձնած էր հայ մաղաղաթներ, քշելու տանելու հայ պանդուխտին հետ այդ օտար ափերը: Գտաւ իր սրտին խօսող էջեր, կարգաց, անյազօրէն կարգաց եւ օրինակեց, Ս. Ղազար տանելու, Ջերմացնելու, կրկին կեանք տալու եւ հայ սրբտին քով գնելու այդ պանդուխտ ծաղիկները: ✕

Բայց ես ո՞ր արեւէն թեւեր առնեմ 81 դարուններու դարձանագրան ծաղիկներուն վրայ թափառելու: Երկար տարիներ խոնարհ ստուերի պէս իր քայլերուն հետեւեցայ, ինչպէս հասկաքաղ մը՝ ոսկի դաշակներ հաւաքելու. սակայն Ալիշանի

կեանքին ախօսը խոր էր, առանց սահմանի ներաշխարհ մ'ունէր, միայն իրեն ծանօթ, մեղի համար հիանալի եւ անթափանցելի: Ուզեց իր բարոյական, քրիստոնէական եւ իմաստասիրական խոհերը բանալ մարդկութեան առջեւ, Նարեկացիի մը պէս ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ, խօսք բնութեան հետ, մարդկութեան հետ, տիեզերքին հետ: Գտաւ եւ գեւին մը, թերեւս անտերեւ ծառ մը: Ո՞ր դտաւ, ո՞ր տեսաւ այդ մենաւոր ծառը, բոլոր ծառերէն հեռացած լերան մը դադար, հովերուն եւ փոթորիկներուն ենթակայ, տանջուած ու տարուբերուած՝ ինչպէս մարդկութիւնը. եւ անոր ներքեւ, Ընդ եղեւնեաւ, թիկունքը բռնին տուած՝ նայեցաւ անհուն տիեզերքին: Սիրտն ուզեց արեւուն շուրջը դառնալ, աչքերն ուզեցին աստղերուն հասնիլ, միտքն երազեց Արարիչը տեսնել իր աթոռին վրայ: Բայց ո՞ր միտքն հասած է մինչեւ հիմա այդ անհատիկի նահմանները: Հանճարները կը խոնարհին Արարչի մը առջեւ, եւ անոր անունը կը կարգան բնութեան մէջ. աղէտները յուսահատ ետ կը դառնան եւ կ'ուրանան Անոր գոյութիւնը: Ալիշան իր հաւատքի աչքերով դտաւ բընութեան այդ մեծ ճարտարապետը: Հարցուց լեռներուն, հովերուն ու ծովերուն անոր անունը, մտաւ քաղաքներու աղաղակով եռուզեռին մէջ, իր մենաւորի կեանքն համեմատեց նիւթին համար մարտնչող մարդկութեան հետ, ու թերեւս իր պատասխան իր սրտին՝ չոր տերեւ մ'ինկաւ դողին մէջ եղեւինէն վար: Օրհնեց իր խաղաղ օրերը վենետիկան կապոյտին տակ, կապոյտ լճակի ափին, ուր փոքրիկ կղզի մը, դմբուխտ ակի պէս փոքրիկ՝ իր բոյնն եղած էր արտոյտի հետ ճոռուղելու: Գոհ էր որ ունէր սեւ կապայ մը, կաշիէ գօտի մը մէջքին, թասի պէս գտակ մը գլուխը, առանց չընանակի՝ համայնական տեսիլք մը, երկունեղ պատուհաններէն դէպի անհունը:

✕ Երբ իրեն հարցուցին թէ միջազգային ճեմարանները, արքաներ քեզի ի՞նչ չը-

քանչան տուեր են, իրաւունք ունէր պատասխանելու՝ թէ իմ շքանշաններս եմ աղքատ կապայ մը, կաշիէ գօտի մը եւ փոքրիկ գտակ մը: ✕

Ջրակեց Ընդ եղեւնեաւ մը՝ անոր բազմաբեղուն հոգին արտայայտելու համար. սիրտն յորդուն գետի պէս կը բխէր, ըզգացում զգացումի հետ, երազ երազի ետեւէն. ուրիշ բանաստեղծական աշխարհ մը կար որ զինքը կը հրապուրէր, անսահման, առանց չընանակի, ուր սէրը, բընութիւնը, հայրենիքն ու Աստուած կը կազմէին անբաժանելի միութիւն մը իր անձին հետ. եւ հոգեկան պահանջ մը մը՝ զեց զինքը, տասնադի բամբուր ձեռքն առնել եւ երգել, թերեւս իր մենաւոր սենեակին մէջ, կամ նոճիի մը տրոտւմ շուրջն տակ, կամ Մայիսի հովերուն հետ. եւ այդ երգը Նուագ անուանեց:

Անշուշտ բարի կրօնաւորն աղօթքով պիտի սկսէր իր կեանքի առաւօտն ողջունել, ինչպէս Կլայեցին: Իր աղօթքը սակայն լոկ շրթներու շարժում չէր, ոչ բանաձեւուած բացատրութիւն, այլ հոգեկան պահանջ մը, խառն մարդկային ցաւերով, զգացումներու պայքարով եւ չարին դէմ օղնութեան պաղատանք, որ Նարեկի մը պէս ի խորոց սրտի յարաբերութիւն մըն էր Արարչին հետ, որդեկան, մտերմական, խոնարհ իր հայեացքին մէջ, համակամ իր մարդկային տկարութեան համար, որ պիտի կոչէր Ով յոյս կեանք իմաց, Աստուած, ... Յոյս իմ ի տիոցս մանկութեան: Յոյս մը որ վերջին հրեշտակն եղաւ իր դամբանին մօտէն հեռացող: Պէտք չզգաց բարձրանալու իմաստասիրական խորութիւններու, սիրեց պարզ ըլլալ, որպէս սրտի աղօթք, մանկական անկեղծ թոթովանք, ուր սէրն առանց արուեստի՝ սպիտակ թռչունի մը պէս պիտի գեղեցիկէր, ծաղիկներուն մէջ, Մայիսի գեղեցիկութեամբ, Յուլիսի ջերմութեամբ, ձմրան սպիտակ մաքրութեամբ, Յիսուսի ետեւէն քալող Յովհաննէս աշակերտին կուսութեամբ խանդավառուած եւ Պետրոսի մը եռանդով

Վստահ եմ թէ ոչ միայն իր սրտին ա-
մենամօտիկ էջերը կը կազմեն Կուսակա-
նուհիւններն են. բանաստեղծ մը հոն սպի-
տակ շուշաններու մէջ, ուր մտքէն ան-
բաժան պիտի թափառի սիրտը, թիթեռ-
նիկի պէս ծաղկէ ծաղիկ, սէրէ սէր: Պի-
տի փնտռէ որդիական դորով եւ քաղ-
ցրութիւն արտայայտող բառեր. Յանուն
Մարիամու Տիրամօր քերթուածը մի մի-
այն հրեշտակները կրնային հիւսել, Պա-
պանիչ որդեգրաց մը միայն Ալիշանի
սրտէն կրնար բխիլ: Եւ քանի հազար ան-
գամ արտասանուած ու կրկնուած են Ս.
Ղազարի կամարներուն տակ, մանկական
չրթներէ, ծերունի հառաչներէ, երիտա-
սարդ նուիրեալներէ:

Կարելի՞ բան էր որ Ալիշան իր հոգե-
կան Երգ երգոցի պարտէզին մօտ չտես-
նէր նաեւ, ուրիշ պարտէզ մը, զոր հինե-
րը դրախտ կոչեցին եւ մարդկութեան օր-
բանն եղաւ, եւ դարերը զայն մկրտեցին
Հայաստան անունով: Եթէ տեղագրական
ճանապարհներով թափառեցաւ Կիլիկիա-
յէն Կասպից ծով, Պոնտոսէն Միջագետք,
լսեց անպայման Արագածէն սահող զե-
փիւռներու սոյլը, առուակներու անդա-
դար խորտը, ու տեսաւ մեր երկրին
ծաղկաբեր Մարերին: Իր մուսան եղաւ
զեղեցիկ Հայաստանը, այնքան հարուստ
լուսապսակ դիւցազներով: Արդէն իր ըզ-
գացումները տրամադրուած էին խան-
դավաւորէն երգելու: Սասակութիւն եւ
կօրով պէտք էր դիւցազներ փառաբանե-
լու, Փառազոյ բամբիւ մը, որ բերէր իր
հետ սօսիներու ծովային մոնշիւնը, ա-
ւելի շեշտաւոր եւ մրճահար բառերու
զանգիւններով՝ քան թէ մօրմօր եւ ողբ
հիւսող ածականներ:

Հայրունիին մէջ իր սիրտն է որ կը խօ-
սի. այդ ճգնաւորը, վանականը, մենաս-
տանի նոճին, յանկարծ բոց կ'առնէ,
փայլակ կը դառնայ, զօրավարի մը զը-
րահները կը հագուի եւ մարտի կ'ելլէ,
քաջակորով Մուշեղին հետ, Վահան Մա-
միկոսեանի հետ, Վահրամ Պահլաւունիի

մը հետ, եւ Աւարայրի մէջ՝ Վարդանի
կողքին՝ յաղթութեան խաչանիշ դրօշա-
կը կը պարզէ:

Այդ սեւ կապային տակ, կաշիէ դօտին
մէջքին, թասի պէս դտակ մը դիւսուն, այդ
մաշած եւ վտխ մարմինը, որ ստուեր
մ'էր Ս. Ղազարի պարտէզներուն մէջ, եւ
կարծես միայն Մարերի փափկութեամբ
սնած, ոչ ոք պիտի կարծէր թէ հայրենի-
քի սէրը կրնար զայն հոգեփոխել պողպա-
տէ սուրի մը: Ի՞նչ սէր, ի՞նչ խանդալա-
տանք հայրենի սրբութիւններու հանդէպ.
մեղմէ ոչ ոք զգացած է եւ պիտի զգայ
այդքան բուռն հայրենասիրութիւն: Հայ
ժողովուրդը զինքը պաշտամունքի խո-
բաններուն վրայ դրաւ, վաւերացուց նաեւ
անոր քերթուածներուն հոգին, սիրտն ու
զեղարուեստական արժէքը. եւ հեղինա-
կութեան մը լաւադոյն եւ անսխալ դա-
տաւորը՝ ընթերցող հասարակութիւնն է:

Իր Դատաստանի վասակայ մատնի,
Ի մահ Տրդատայ ահեղագօրն արքային
Հայոց, կամ Սեպուհի վասակ, թէպէտ
գրաբար լեզուով, սակայն ես կը հրաւի-
րեմ գրաբարդէտ մտաւորականները՝
հազար անգամ կարդալ, հազար զեղեց-
կութիւն, մտքի խորութիւն եւ խանդի ա-
րեւնային թուիչ գտնելու համար: Ես կը
հրաւիրեմ միջագոյնին հանճարները՝
Հոռոմի կամ Աթէնքի աւերակներուն վրայ
քանդակել այնքան խոր զգացում, խանդ
եւ երեւակայութիւն, բանաստեղծական
արուեստ, իրենց մուսաններու ոսկեղէն
մուրճերով: Անին պիտի մնայ միշտ սըր-
տառուչ, Անին փառաւոր՝ Ախուրեանի ա-
փին, Անին ողբալի՝ համայն մարդկու-
թեան համար:

Ալիշան ինչպէս զիտէ յորդիւ Արաքսի
կամուրջներ քանդող հոսանքներուն պէս,
զիտէ եւ մեղմանալ, քրմական խորհրդա-
ւորութեամբ զգենուլ սէրը, ձեռքը սըր-
տին զնել, սոխակի երգը բերնին, թեւա-
ծել Դրախտի հարսանեկան առաջատին
մէջ, նկարագրել Ազամ-Եւայի առաջին
սէրը, անմահական ծաղիկներով զարդա-
րել այդ առաջատար, մարդկային սիրոյ

առաջին բրանքներն ըզգալ եւ գոչել. Սէր,
մեծ է սէր, ամէն բան ունի, այն որ սէր
ունի:

Ո՞ր կրնամ կարդալ այն փափուկ տո-
ղերը, այն դուրդուրանքն ու նրբութիւնը,
այն կենդանի շուշանը, նկարագրուած
հայրենի հովիտներուն մէջ, Շաւարշանի
ծաղիկներէն աւելի ծաղիկը, որուն ոտ-
քերուն տակ

Նարկիզ աչքեր բիւր հանէ,
Ուր որ Սանդուխտ անցանէ:

Որո՞ւն սիրտը պիտի չփղձկի՝ երբ Նա-
հապետին հետ ուխտի երթայ հայ գերեզ-
մաններուն, եւ լուսնկան, տրտում ճրա-
դը, Աստուածավառ լապտերը իր թախ-
ծոտ ցոլքերը սփռէ, զայ լուսաւորելու
արքաներու, զօրավարներու, դիւցազնե-
րու անյայտ շիրիմները, Եղի մեղրի մման
կաթիլ մը չող թափելով նաեւ Նահապե-
տի արցունքոտ աչքերուն մէջ: Այլեւս
հին օրերու լուսինը չէ, հին զրահներու
փայլ տուող աստուածավառ լապտերը,
այլ յերկուս անգամ արտի մը միտթա-
րանքն ու ընկերը:

Նոյն լուսնակին պիտի հարցնէ,
Ո՞նց գաս իմ լուսնակ հեղիկ ու հանդարտ,
.
Միքէլ գա՞ս սրբուել ոսկեբաց սրբոց
Զիւնափայլ ամպէդ ոսկեքել ծածկոց:

Գիւտաւոր տողերով, թախիծը ընդե-
լուզած տեղական պայմաններուն, Ալի-
շան զիտէ ստեղծել թովիչ կիսամութիւն
մէջ առինքնող սրբավայր մը: Իր լարե-
րուն երգ պիտի տան Մակունայ եւ Մա-
սիտի հովերը, Տղմուտը պիտի տայ իր
խոխտը, Պլպուլն Աւարայրի՝ վարդերու
հառաչանքը:

Իր սիրտը ծանր է, իր հոգին տրտում,
իր գրիչէն արտօսը կը հոսի եւ հառաչանք
մը՝ բոլոր մարդկային հառաչանքներէն
աւելի զգայուն. պիտի գիմէ Աւարայրի
պլպուլին,

Ո՞վ դու բարեկամ այրած սրտերու...
Իր սրտին եւ պաշտամունքին ամենա-
սիրելի դիւցազներուն մահը պիտի ողբայ

եւ իրեն հետ Հայաստան հոն է, իր սրտին
մէջ թաղելու Աւարայրի դիւցազները:

Սակայն յուսահատ երգեր, հեթանոս
ողեր չհիւսեց. նա զիտէր որ հայ դիւ-
ցազները չեն մեռնիր, հայ հողը կենդանի
կը պահէ իր զաւակները, եւ հակառակ
մահերու, հակառակ կործանումներու,
հայրենիքը կը ստեղծէ նոր դարուններ,
Արարատը անսասան կը մնայ. եւ կարծես
մարդարէի հողիով երգեց դարձեալ այդ
հին դրախտը, այնքան նման սուրբ Ղա-
զարի ծաղկազարդ պուրակներուն, յա-
ւերժօրէն սիրելի, յաւերժօրէն անմոռաց.
Հայոց աշխարհիկ, գարունդ է հասել,
Ահա գեղեցիկ գարուն քո եկել,
Ո՞վ դու ի վաղուց մոռցուած հայրենիք,
Ո՞վ դու իմ սրբուխ անմոռաց տեղիք:

Որչափ հետեւինք Ալիշանի սրտին զար-
կերուն, այնքան մեր քայլերը պիտի մո-
լորին խորութենէ խորութիւն: Սիրտ մը՝
որ հազար լարի վրայ կը թրթռայ, մարդ-
կային բոլոր զգացումները իր մէջ բո-
վանդակուած ունի: Կրօնական տողերու
թռիչքներէ, հայրենի աշխարհին վրայ
թափառումներէ յետոյ՝ բանաստեղծը կը
մտնէ իր հոգեկան աշխարհին մէջ, կը փա-
կէ իր թեւերը, կը սիրէ երկու պատու-
հաններէն դուրս ցոլացող ազօտ ճրագին
լոյսը, եւ այդ խաղաղ մենարանին ճրգ-
նը, դարձեալ իր մէջ կը գտնէ մարդկա-
յին ցաւերը: Ի՞նչ փուշ մտած էր իր սըր-
տին մէջ, ի՞նչ սեւ ամպ անցած էր իր լու-
սամուտներուն առջեւէն: Մարդը մարդ
է, ուր որ ալ ապրի, եւ վանքի մը պատե-
րը չեն կրնար զինքը բոլորովին անջատել
տառապող մարդկութենէն:

Զիք աստ անանց եւ անսխալ. այս է
իր նախերգանքին մէջ արտայայտած է-
ական պատճառը «Տխրունի» գրելու: Իր
շուրջը մեռնող սիրելի զէմքեր. իր շուրջը
խամրող ծաղիկներ, մեռելոցի զանգակ
մը ստէպ սեւ վարագոյր կը քաշէին անոր
աչքերուն, եւ զլուսն ամբարձնէ մէջ, մե-
նաւոր սենեակին լուսութեան տակ, այդ
վանականն ալ կը տրտմէր, լուռ վիշտեր

զինքը կը պաշարէին: Եւ կը հարցնէր իր անձին,

Արդ, անձն իմ, հի՞մ ես տրտում,
Ե՞ր զիս տանջես անդադար,
Միթէ առ կեա՞լ ի սրգում
Հաստատեցար վայրապար:

Ի՞նչպէս իր անձը չսգար՝ երբ իր սիրելի դասընկերը, փոքրիկ Միհրանը գերեզման կը մտնէր, հազիւ կեանքի արեւը տեսած. եւ իրաւունք ունէր պաղատելու, Ո՛հ, ցոյցե՛ք, ցոյցե՛ք դառն արտասուք:

Անցաւոր կեանքն ու մահը սեւ ոգիի մը պէս յաճախ կը մտնէր նաեւ այդ մենաւոր կղզիին մէջ, եւ Ալիշանի զգայուն հոգին առաջինը կ'ըլլար գեղեցիկ ողբ հիւսելու: Յետոյ կը դառնար իր անձին, ինքն ալ մահկանացու էր, օր մը իրեն համար ալ Ս. Ղազարի զանգակները տըրտմօրէն պիտի ղօղանջէին: Զկայ անտրտում մարդկային կեանք, Ոչ է քրնար ոյր չիցէ լար անտըխուր պիտի ըսէր իր սրտին:

ՔԱլիշանի այդ քնարը հնչեց մեր գեղեցկագոյն երգերը. այդ քնարը աստուածներէն առաւ եւ մարդկութեան տուաւ. երանի՜ անոնց, հոգեկից կամ բարեկամ, որոնց շիրիմներուն վրայ իր արցունքներն ինկան:

Պանդուխտ հայրենի աշխարհէն, պանդուխտ՝ արցունքներու հովիտին մէջ, պիտի պատասխանէր. Ե՛հ, պանդըխտին մի տայք ողջոյն, զի ոչ է: Եւ այդ բանաստեղծօրէն զգացուած քերթուածին մէջ իր ցեղին զաւակներուն բազմադարեան կարօտը պիտի երգէր. կարծես միայն մեր ազգին սահմանուած տխուր ճակատագիրը:

Եթէ Ս. Ղազար իր սրտին օրօրանն եղաւ, փոքրիկ Հայաստան մը, ուր շրջապատուած հայրենի յուշերով, պատմազիրներով, ձեռագիրներով, իրեն սիրտին կը գտնէր, անոր սիրտը շատ աւելի կսկիծներ կ'ունենար, երբ կարճատեւ ճամբորդութեան միակ ժամանակ մինակ կը մնար: Օտար լիճ մը, գետ մը, լեռ մը իր միտքը կը տանէր հայրենիք եւ ինքզինքը աւելի պանդուխտ կը զգար, աւելի

ցաւոտ: Հոնոս գետը կը տեսնէր, բայց ոչ Արաքսը. Սպիւկէն լեռները կ'այցելէր եւ կարօտ կը մնար Արարատին ու Արազածին: Վաթերլոյի ճակատամարտին յուշերը կը նկարագրէր, եւ Աւարայրի սրբազան հողն իր այրած սրտին վրայ չէր կրնար ցանել:

Դիւրագգած հոգի մը, անցեալի փառաւոր տեսիլներով ապրած, Ալիշան մը պէտք էր անպայման խոր վիշտեր ունենալ, երբ զրկուած հայրենի հողէն, անջատուած իր արենակից սիրելիներէն՝ դարունէ դարուն լոկ պիտի սպասէր կըռունկի մը խապրիկներուն:

Գիտէր թէ պատրանք է օտար ափեր տեսնել եւ հայրենիք երազել. սիրտն աւելի պիտի կսկծար. լաւ էր թերեւս մոռնալ ամէն բան, բայց նա ի՞նչպէս մոռնար Հայաստանը. աւելի դիւրին է ծընողքը մոռնալ՝ քան հայրենիքը: X

Սակայն ինչո՞ւ հազիւ 32 տարեկան, հազիւ մտած հասունութեան արտերը, յանկարծ իր քնարը վար կը դնէ: Նա յոգնած չէր, սրտի աղբիւրները չէին ցամքած, հոգին զօրաւոր թուրքի մէջ էր. ինչո՞ւ Հուսկ քան առ Ոգին մուգահան հրաժեշտի երգը պիտի գրէր. իր կարապի երգը. իր բանաստեղծական հրաշալիքը՝ որուն տակ աշխարհի բոլոր հանճարները փութալով պիտի ստորագրէին: Զեմ խորհիւր թէ նա հպարտ դիտումով լծած ըլլայ իր մտային, հոգեկան, լեզուական եւ գեղարուեստական բոլոր ոյժերը՝ ցոյց տալու համար իր բանաստեղծի արտակարգ շնորհքը. ո՛չ. ինչպէս ցաւն աւելի բուռն կ'ըլլայ՝ երբ սրտամօտիկ սիրելիէն կը բաժնուի, այսպէս եղաւ եւ իրեն համար. Հառաչեցեր դու զաւ եւ իրեն համար. Հառաչեցեր դու յաճախ, արդ հառաչեա եւ մի հաղ, անգամ մ'ալ հառաչէ՛ կը պաղատի իր սրբտին, Շատ շարժեցար սիրտ,.... Ժամ է որ լուս, դուն որ անհամբեր կը փութալիր քնարը ձեռքդ առնելու. ահա կիրքերը կը դադրին. ահա արեգակը կը մարի պատուհաններուս առջեւէն, եւ ճրագի աղօտ լոյսը սեւ կապայի մը տակ, գօտի

մը մէջքիս, Թասի պէս դտակ մը գլխուս վրայ, աղօթելու եւ խոկալու կը հրաւիրէ....:

Այսպէս պիտի խորհէր Ալիշան, եւ այսպէս լուեց իր քնարը. մահը չէր որ ձեռքէն յափշտակեց, ոչ սիրտը ցամքեցաւ, ոչ երազները աղուոր ամպերու նըման իր աչքերէն հեռացան:

Կ'լուեց իր քնարը, բայց անոր անլուելի դանդիւնը մեր հայրենի հովերուն խառնուած, մեր ծաղիկներու բուրումով օծուած, դարեր պիտի շրջի Աւարայրի պըլպըլին հետ, Արագածի լուսնկային հետ եւ մարդկային բոլոր տենչերուն ու ցա-

ւերուն աղաղակին հետ՝ ուր Եկեաց, ելաց եւ երգեաց:

Երկու պատուհաններ կը նային դէպի կապոյտ լճակը, եւ աւելի կապոյտ երկինքը կը թափանցէ անոր մէջ. ճգնաւոր մը, հայրենասէր մը, յեղափոխական մը, մտքի անդունդներու վրայ սաւառնող հոգի մը, սեւ կապայ մը հազած, կաշիէ գօտի մը մէջքին, դտակ մը գլուխը, եթերացած, լուսաւոր ստուեր եղած կը նայի տակաւին դէպի հորիզոնները առանց սահմանի, առանց շրջանակի, կարծես աւելի ներկայ փոքրիկ Ս. Ղազարի մէջ, Հայաստանի մէջ: *

Վեներտիկ, 22 Նոյեմբեր 1961

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ԱՆԻՇԱՆԻ ՆԻՆՁԷ

Յարմէհետէ գերեզմանները բազմացան
Խաւարակուտ կամարին տակ Հայաստանի,
Մասիսին վրայ խաչ մը հսկայ դեռ կ'արիւնի,
Ու քեզ պատած է լըռութիւնը շիրմական:

Բայց կը հասնին ձայներ՝ որոնք ողջոյն կու տան
Սիրատոջոր եւ մշտաբքուն Նահապետին,
Որուն անշէջ ու ոսկեվառ բոց է հոգին,
Աստուածախոր ակութիւն մէջ հայրենական:

Յիշատակի քանի է վըրան գերեզմանիդ,
Ուր քափեցան մեր արցունքներն ականակիտ,
Որպէս զի դուն երազին փառքը պատգամես:

Անիւնիդ մէջ աղօթքին խունկը միշտ կ'այրի.
Կը մըխայ սիրտդ օրհնութեան բուրվառին պէս...
Բայց մնչէ՛ դեռ միւնչեւ՝ զարթումն հրաշալի...

ԱՐՍԷՆ ԵՐԿԱՌ